Զուտ ներքին ակտիվներ, ընդամենը	1 743 949	1 805 920	1 872 159	2 107 534
Փողի զանգված, ընդամենը	1 539 023	1 587 559	1 598 407	1 689 783
Փողի բազմարկիչ	1.97	2.23	2.22	1.89
	<i>%-ային փոփոխությունները նախորդ ամսվա նկատմամբ</i>			
Զուտ արտաքին ակտիվներ, ընդամենը ²	-20.1	2.3	-10.9	-14.6
Զուտ ներքին ակտիվներ, ընդամենը	3.5	0.4	1.1	4.6
Փողի զանգված, ընդամենը	1.6	0.7	-0.4	2.4

Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները

	2014թ.				%
	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր	
Առևտրային բանկերի գործառնությունների տոկոսադրույքները					
վարկեր ⁵	16.72	16.46	16.35	16.26	
ավանդներ ⁵	9.71	10.64	10.12	10.95	
ՀՀ կենտրոնական բանկի ռեպո գործառնությունների տոկոսադրույքները	7.50	7.00	6.75	8.50	

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2014թ. դեկտեմբերի վերջին կազմել է 894 152 մլն. դրամ և նոյեմբերի նկատմամբ նվազել 6 735 մլն. դրամով կամ 0.7%-ով, իսկ 2013թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել՝ 103 925 մլն. դրամով կամ 13.2 %-ով:

¹ Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

² ԶՄՊ-ն հաշվարկված է հետևյալ ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 410.00 դրամ, 1 SDR = 1.5147 ԱՄՆ դոլար,

³ 1 EUR = 1.3275 ԱՄՆ դոլար, 1 GBP = 1.5313 ԱՄՆ դոլար, 1 RUB = 0.0304 ԱՄՆ դոլար:

⁴ Ներառյալ կուտակված տոկոսները և հաշիվները:

⁵ Ընդգրկված են ՀՀ ԿԲ, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները, ներառյալ հաշիվները:

Հաշվարկված է մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

4.1. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.1.1 Արտաքին առևտուր

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված և հավաքագրված օպերատիվ տվյալների (բացառությամբ էներգակիրների վերաբերյալ տեղեկատվության, որի աղբյուրը հանդիսանում են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և էներգետիկ կազմակերպությունները, քանզի էներգակիրների վերաբերյալ բեռնամաքսային հայտարարագրերի լրացման ժամկետները կարող են չհամընկնել արտահանման և ներմուծման փաստացի ժամկետներին), ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2014թ. դեկտեմբերին և հունվար-դեկտեմբերին, ընթացիկ գներով, կազմել են.

մլն. ԱՄՆ դոլար

	2014թ. դեկտեմբեր	2014թ. դեկտեմբերը 2013թ. դեկտեմբերի ^o նկատմամբ, %	2014թ. դեկտեմբերը 2014թ. նոյեմբերի նկատմամբ, %
Արտահանում	135.3	103.1	101.0
Ներմուծում	391.1	85.3	101.8
Առևտրաշրջանառություն	526.4	89.3	101.6

Արտաքին առևտրի ամփոփ ցուցանիշները

	2014թ. հունվար-դեկտեմբեր	
	մլրդ. դրամ	մլն. դոլար
Արտահանում (ՖՕԲ գներով)	631.5	1 519.3
Ներմուծում (ՄԻՖ գներով)	1 829.9	4 401.6
Առևտրաշրջանառություն	2 461.4	5 920.9
Առևտրի հաշվեկշիռ	-1 198.4	-2 882.3
Առևտրի հաշվեկշիռ (առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների)	-1 176.5	-2 829.7
Առևտրի հաշվեկշիռ (արտահանումը և ներմուծումը՝ հաշվարկված ՖՕԲ գներով)	x	-2 204.5

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և առևտրի հաշվեկշռի ցուցանիշներն ըստ առանձին երկրների

հազ. դոլար

	Արտաքին առևտրաշրջանառություն			Առևտրի հաշվեկշիռ					
	2013թ. հունվար-դեկտեմբեր ^o	տեսակարար կշիռը, %	2014թ. հունվար-դեկտեմբեր	տեսակարար կշիռը, %	աճի տեմպը, %	2013թ. հունվար-դեկտեմբեր ^o	տեսակարար կշիռը, %	2014թ. հունվար-դեկտեմբեր	տեսակարար կշիռը, %
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	5 864 614.5	100.0	5 920 906.7	100.0	101.0	-2 907 117.3	100.0	-2 882 314.9	100.0
որից՝									
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	1 700 110.9	29.0	1 700 371.0	28.7	100.0	-899 785.2	31.0	-969 321.9	33.6
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	1 653 354.7	28.2	1 574 070.6	26.6	95.2	-664 931.9	22.9	-699 252.2	24.3
Այլ երկրներ	2 511 148.9	42.8	2 646 465.1	44.7	105.4	-1 342 400.2	46.2	-1 213 740.9	42.1

ՀՀ արտաքին առևտուրն ըստ առանձին երկրների

հազ. դոլար

	Արտահանում			Ներմուծում					
	2013թ. հունվար-դեկտեմբեր ^o	2014թ. հունվար-դեկտեմբեր	աճի տեմպը, %	ըստ առևտուր անող երկրի			ըստ ապրանքի ծագման երկրի		
				2013թ. հունվար-դեկտեմբեր ^o	2014թ. հունվար-դեկտեմբեր	աճի տեմպը, %	2013թ. հունվար-դեկտեմբեր ^o	2014թ. հունվար-դեկտեմբեր	աճի տեմպը, %
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	1 478 748.6	1 519 295.9	102.7	4 385 865.9	4 401 610.8	100.4	4 385 865.9	4 401 610.8	100.4
որից՝									
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	400 162.8	365 524.5	91.3	1 146 788.6	1 011 838.4	88.2	1 299 948.1	1 334 846.4	102.7
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	494 211.4	437 409.2	88.5	1 343 764.9	1 132 333.4	84.3	1 159 143.3	1 136 661.4	98.1
Այլ երկրներ	584 374.3	716 362.1	122.6	1 895 312.4	2 257 439.0	119.1	1 926 774.5	1 930 103.0	100.2

4.1.2 Մարդասիրական օգնություն

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, 2014թ. հունվար-դեկտեմբերին մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 6 053.2 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 21.9 մլրդ. դրամ կամ 52.6 մլն. ԱՄՆ դոլար: Ստացված օգնության 38.3%-ը կազմել է քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 16.7%-ը՝ մանածագործական իրերը, 7.9%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները, 8.6%-ը՝ սարքեր և ապարատները, 7.5%-ը՝ տարբեր արդյունաբերական ապրանքները, իսկ 21.0%-ը՝ մնացած ապրանքները:

4.2. Զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2014թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ է ժամանել¹ 1 203 746 զբոսաշրջիկ² կամ 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 11.3%-ով: 2014թ. հունվար-դեկտեմբերին զբոսաշրջության նպատակով ՀՀ-ից մեկնել է¹ 1 198 060 մարդ կամ 2013թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 10.9%-ով:

4.3. Արտարժույթային փոխարժեքներ

2014թ. դեկտեմբերին 1 ԱՄՆ դոլարի, 1 ԵՎՐՈ-ի և 1 Ռուսական ռուբլու արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներն, ըստ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվության, կազմել են, համապատասխանաբար՝ 463.53, 570.85 և 8.25 դրամ:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՆ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2014թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի (հաշվարկված՝ ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների) 1 000 մարդ

	Ամբողջ բնակչություն	Կին	Տղամարդ
2013 թ. հունվարի 1-ի դրությամբ	3 026.9	1 575.2	1 451.7
2014 թ. հունվարի 1-ի դրությամբ	3 017.1	1 573.6 [◇]	1 443.5 [◇]
2015 թ. հունվարի 1-ի դրությամբ	3 010.6	1 571.3	1439.3

2. Առկա բնակչության թվաքանակն ըստ սեռի

	Ամբողջ բնակչություն	Կին	Տղամարդ
2011 թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ ²	2 871.8	1 525. 1	1 346.7

3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-դեկտեմբեր	10.8	9.7	11.7
2013թ. հունվար-դեկտեմբեր	9.7 [◇]	8.5 [◇]	10.8 [◇]
2014թ. հունվար-դեկտեմբեր	8.7	8.0	9.3

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-դեկտեմբեր	12.1	11.1	12.6
2013թ. հունվար-դեկտեմբեր	11.0 [◇]	9.5	12.5
2014թ. հունվար-դեկտեմբեր	10.2	9.5	10.8

¹Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև ՀՀ էլեկտրոնային նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Վերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ 2013թ. իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

²Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատների այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

² ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով:

5. Մայրական մահացության գործակիցը՝ 2012-2014թթ. համար, 100 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 19.6 (25 դեպք), 2009-2011թթ. արձանագրված՝ 16.6 (22 դեպք) դիմաց:

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2013/2014 ուսումնական տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2014թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 016 790 դրամ (2 475 ԱՄՆ դոլար կամ 1 826 եվրո):

14. Գործազրկության մակարդակը¹ 2014թ. հուլիս-սեպտեմբերին (III եռամսյակ) կազմել է 17.1%, կանանցը՝ 20.1%, տղամարդկանցը՝ 14.1%:

15. 2014թ. հուլիս-սեպտեմբերին (III եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված¹ է եղել ՀՀ բնակչության 38.7%-ը, այդ թվում կանանց՝ 33.1%-ը և տղամարդկանց՝ 46.0%-ը:

5.2. Ժողովրդագրական իրավիճակը

ՀՀ վարչատարածքային բաժանման հիմքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն են, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզերի՝ 48 քաղաքային ու 866 գյուղական համայնքներով և Երևանի քաղաքային համայնքի (12 վարչական շրջաններով):

ՀՀ վարչատարածքային բաժանումն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ

	Համայնքների քանակը			Բնակավայրերի քանակը
	ընդամենը	քաղաքային	գյուղական	
Հայաստանի Հանրապետություն	915	49	866	1 002
ք. Երևան	1	1	-	1
Արագածոտն	114	3	111	120
Արարատ	97	4	93	99
Արմավիր	97	3	94	98
Գեղարքունիք	92	5	87	98
Լոռի	113	8	105	130
Կոտայք	67	7	60	69
Շիրակ	119	3	116	131
Սյունիք	109	7	102	134
Վայոց ձոր	44	3	41	55
Տավուշ	62	5	57	67

Սկսած 2013թ.-ից ժողովրդագրական ցուցանիշների ընթացիկ հաշվառումն իրականացվում է ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների, ընդ որում, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 2012թ. ցուցանիշը վերահաշվարկվել է այդ հիմքով:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, ընթացիկ հաշվառմամբ (2011թ. մարդահամարի հիմքով վարվող) կազմել է 3 010.6 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 1 913.0 հազ. մարդ և գյուղականը՝ 1 097.6 հազ. մարդ, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, համապատասխանաբար՝ 3 017.1 հազ., 1 914.1 և 1 103.0 հազ. մարդու համեմատ:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, հունվարի 1-ի դրությամբ

(ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով)

1 000 մարդ

	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.
Հայաստանի Հանրապետություն	3 017.1	3 010.6	1 914.1	1 913.0	1 103.0	1 097.6
ք. Երևան	1 068.3	1 071.6	1 068.3	1 071.6	-	-
Արագածոտն	132.3	131.3	30.3	29.9	102.0	101.4
Արարատ	260.8	260.1	74.4	74.0	186.4	186.1
Արմավիր	267.2	267.0	85.3	85.0	181.9	182.0
Գեղարքունիք	234.1	233.0	70.8	70.2	163.3	162.8
Լոռի	230.8	228.0	135.5	134.3	95.3	93.7
Կոտայք	255.0	255.0	138.2	138.5	116.8	116.5
Շիրակ	248.3	246.4	144.5	143.5	103.8	102.9
Սյունիք	141.0	140.2	94.7	94.4	46.3	45.8
Վայոց ձոր	51.7	51.4	18.2	18.1	33.5	33.3
Տավուշ	127.6	126.6	53.9	53.5	73.7	73.1

¹ Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա:

2014թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 43 183 ծնված, որը 2013թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 3.4%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, 1 000 բնակչի հաշվով աճել է, համապատասխանաբար՝ 0.5 պրոմիլային կետով և կազմել՝ 14.3 ‰:

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները հունվար-դեկտեմբերին

	Բացարձակ թվաքանակ, մարդ		Բացարձակ ցուցանիշի աճը/ նվազումը, %	1 000 բնակչի հաշվով, պրոմիլ	
	2013թ.	2014թ.		2013 թ.	2014թ.
Ծնվածներ	41 790	43 183	103.3	13.8	14.3
տղաներ	22 152	22 965	103.7	15.3	15.9
աղջիկներ	19 638	20 218	103.0	12.5	12.9
Մեռելահիմներ	711	751	105.6	16.7¹	17.1¹
Սահացածներ	27 196	27 872	102.5	9.0	9.2
արական	13 829	14 159	102.4	9.6	9.8
իգական	13 367	13 713	102.6	8.5	8.7
Բնական հավելաճ	14 594	15 311	104.9	4.8	5.1
Մնուսնություններ	18 363	18 912	103.0	6.1	6.3
Մնուսնալուծություններ	3 756	4 498	119.8	1.2	1.5

ՀՀ կառավարությանն առնթրել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ստացված ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի վարչական հաշվառման համաձայն, 2014թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է բնակչության տեղաշարժերի հաշվառման և հաշվառումից դուրս գրման 76 960 գրանցումներ, ներառյալ ներհանրապետական տեղաշարժերը, որոնք կազմել են ընդամենը գրանցումների 62.5%-ը:

ՀՀ բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառումներ, 2014 թ. հունվար-դեկտեմբեր

	/գրանցում/				
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
ՀՀ բնակչության պետոեգիստրում գրանցված տեղաշարժեր, ընդամենը գործողություն (հաշվառված՝ 1+2, ինչը նույնն է հաշվառումից հանված՝ 3+4) այդ թվում՝	21 586	19 545	22 051	13 778	76 960
1. ՀՀ տարածքում հաշվառման գործողություն (ա+բ+գ) ²	17 365	15 879	17 350	10 519	61 113
ա/ Որից՝ ներքին տեղաշարժերի	13 479	12 628	13 743	8 236	48 086
բ/ Օտարերկրներից ժամանման (հաշվառման) գործ. - ընդամենը	3 886	3 248	3 605	539	11 278
գ/ Մնորոշ	0	3	2	1 744	1 749
2. ՀՀ քաղաքացիների հաշվառում արտերկրի բնակավայրի հասցեով ³	4 221	3 666	4 701	3 259	15 847
3. ՀՀ տարածքում հաշվառումից հանելու գործողություն ² (ա+բ)	14 608	13 856	14 835	9 053	52 352
ա/ Որից՝ ներքին տեղաշարժերի	13 479	12 628	13 743	8 236	48 086
բ/ Օտար երկիր մեկնելու (հաշվառումից հանելու) գործ. - ընդամենը	1 129	1 228	1 092	817	4 266
4. ՀՀ քաղաքացիների օտար երկրներում տեղաշարժերի գործողություն ³ - ընդամենը	6 978	5 689	7 216	4 725	24 608

ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՄԷԿՏ) սահմանային անցման կետերում իրականացված սահմանային գրանցումներով ուղևորաշրջանառության համախառն ծավալը 2014թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5 510.9 հազ., 2013թ.՝ 4 983.9 հազ. ուղևորության համեմատ: Սահմանային գրանցումների հաշվեկշիռը (գրանցված մուտքերի և ելքերի տարբերությունը) 2014թ. հունվար-դեկտեմբերին կազմել է -41.7 հազ. սահմանային գրանցում:

¹ 1 000 կենդանի և մեռած ծնվածի հաշվով:

² Մշտական բնակչության վայրը փոխելիս քաղաքացի ղինում է նոր բնակչության վայրի տեղական ռեգիստր, ինչի մասին էլ օրենքով սահմանված կարգով, տեղեկացվում է (էլեկտրոնային ավտոմատ եղանակով) նախկին հաշվառման վայրի տեղական ռեգիստրը (ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշում, հավելված 1 «Բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգ» գլխ. III, կետ 9):

³ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանում մշտական բնակչության վայր չունեցող և մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակվող անձը ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվելիս՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառվում է օտարերկրյա պետությունում իր բնակչության վայրի հասցեով (ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշում, հավելված 1 «Բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգ» գլխ. II, կետ 7բ):

ՀՀ սահմանահատումների ծավալներն ըստ ՀՀ սահմանային անցման կետերի
(առանց նույնականացման, ըստ քանակային գրանցումների*)

Սահմանային գրանցում

Սահմանային անցման կետեր	2014թ.					
	Մուտք		Ելք		Հաշվեկշիռ	
	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով
Զվարթնոց	1 044 842	534 772	1 039 345	540 324	5 497	-5 552
Բազրատաշեն	1 094 465	802 632	1 119 842	822 212	-25 377	-19 580
Մեղրի	96 201	11 037	96 060	11 184	141	-147
Այրում	36 904	27 601	36 413	29 497	491	-1 896
Գոգավան	45 398	28 189	41 988	26 881	3 410	1 308
Բավրա	397 795	170 953	420 926	189 893	-23 131	-18 940
Գումրի	17 593	9 612	20 310	11 871	-2 717	-2 259
Պրիվոլնոյե	1 398	519	1 384	527	14	-8
Ընդամենը	2 734 596	1 585 315	2 776 268	1 632 389	-41 672	-47 074
Սահմանային անցման կետեր	2013թ.					
	Մուտք		Ելք		Հաշվեկշիռ	
	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	Ընդամենը	Այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով
Զվարթնոց	877 347	476 621	845 897	459 913	31 450	16 708
Բազրատաշեն	1 021 503	728 828	1 068 606	768 554	-47 103	-39 726
Մեղրի	85 966	11 688	85 438	11 868	528	-180
Այրում	37 783	28 857	38 442	31 500	-659	-2 643
Գոգավան	49 345	30 221	44 409	28 335	4 936	1 886
Բավրա	371 245	155 079	386 078	168 080	-14 833	-13 001
Գումրի	31 158	19 979	36 666	25 014	-5 508	-5 035
Պրիվոլնոյե	2 003	812	2 002	822	1	-10
Ընդամենը	2 476 350	1 452 085	2 507 538	1 494 086	-31 188	-42 001

*)Սահմանահատում կատարած անձանց թվաքանակի վերաբերյալ տվյալները (2014թ. 2734596 մուտքի սահմանահատումները կատարվել են 1 407 720 անձանց կողմից, իսկ 2 776 268 ելքի սահմանահատումները՝ 1 448 855 անձանց կողմից) ստացվել են ՄԷԿՏ համակարգում 2013թ.-ին ներդրված սահմանահատում կատարած անձանց նույնականացման ծրագրի հիման վրա, ինչը հնարավորություն է ընձեռել ճշգրտելու նաև ՀՀ փաստաթղթերով որպես երկրադարձի սահմանահատում կատարած անձանց վերաբերյալ տվյալները (տես՝ ստորև ներկայացվող պարզաբանումը):

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Սահմանահատում կատարած անձանց նույնականացման ծրագրի և տվյալների հետագա վերլուծության արդյունքների վերաբերյալ

ՀՀ ԱԿԾ առաջարկությամբ ՄԷԿՏ համակարգում 2013թ. ներդրված նոր ծրագրով, որի հիմքում դրված է սահմանահատում իրականացրած անձանց նույնականացումը, իսկ երկրադարձիները դիտարկվել են որպես ՀՀ քաղաքացիներ, 2014թ. համար ունեցել է հետևյալ պատկերը.

ՀՀ սահմանային անցակետերով սահմանահատում կատարած անձինք (նույնականացված) ըստ ՀՀ և օտարերկրյա փաստաթղթերի, 2014թ.

	Ընդամենը	ՀՀ փաստաթղթերով ¹ (ներառյալ երկրադարձիները)	Օտարերկրյա փաստաթղթերով
Մուտք	1 407 720	770 237	637 483
Ելք	1 448 855	819 091	629 764
Տարբերություն	-41 135	-48 854	7 719

ՄԷԿՏ համակարգի կառավարող մարմնի կողմից 2014թ.-ի ընթացքում իրագործված սույն ծրագրով սահմանահատում կատարած անձանց նույնականացման, ինչպես նաև ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից տրամադրված 2007թ. երկրադարձիության մասին օրենքն ընդունելուց հետո մինչև 2015թ., ՀՀ քաղաքացիությունը որպես երկրորդ քաղաքացիություն ստացած 53 322 (որից 11 637-ը՝ 2014թ.) օտարերկրացիների սահմանահատումների տվյալները վերլուծելով ստացվել է, որ.

- 5 781 օտարերկրացիներ 2014 թ.-ին մուտք են գործել ՀՀ, որից հետո ստացել են ՀՀ քաղաքացիություն: Նրանցից 4 961-ը՝ 2014թ.-ին ՀՀ սահմաններից ելք են կատարել ՀՀ փաստաթղթերով, ուստի վերոհիշյալ աղյուսակում նշված ՀՀ քաղաքացիների ելքի ցուցանիշը (819 091) նվազեցվել է 4 961-ով (819 091-4961=814 130), ի հաշիվ օտարերկրացիների (629 764 + 4 961=634 725)
- նախկինում ՀՀ քաղաքացիություն ստացած և մինչև 2014թ. ՀՀ-ում գտնվող 8 355 օտարերկրացիներից՝ 5 530-ը՝ 2014թ.-ին ՀՀ սահմաններից ելք են կատարել ՀՀ փաստաթղթերով, ուստի վերոհիշյալ աղյուսակում նշված ՀՀ քաղաքացիների ելքի ցուցանիշը (819 091) նվազեցվել է ևս 5 530-ով (814 130-5 530=808 600), ի հաշիվ օտարերկրացիների (634 725+5530=640 255)
- նախկինում ՀՀ քաղաքացիություն ստացած 22 110 օտարերկրացիներ 2014թ.-ին մուտք են գործել ՀՀ, որոնցից 21 701-ը՝ 2014 թ.-ին ՀՀ սահմաններից ելք են կատարել (22 110 -21 701= 409), ուստի վերոհիշյալ աղյուսակում նշված ՀՀ քաղաքացիների մուտքի ցուցանիշը (770 237) նվազեցվել է 409-ով (770 237-409= 769 828), ի հաշիվ օտարերկրացիների (637483+409= 637 892)
- 537 անձանց տվյալները նույնականացման հնարավորություն չեն ընձեռել:

Իրականացված վերահաշվարկի արդյունքում 2014թ. սահմանահատում կատարած անձանց տվյալները ներկայացվում են ստորև.

	Ընդամենը	ՀՀ փաստաթղթերով	Օտարերկրյա փաստաթղթերով
Մուտք	1 407 720	769 828	637 892
Ելք	1 448 855	808 600	640 255
Տարբերություն	-41 135	-38 772	-2 363

¹ ՀՀ քաղաքացիական անձնագիր, ՀՀ դիվանագիտական անձնագիր, ՀՀ ճամփորդական փաստաթուղթ, ՀՀ վերադարձի վկայական և սահմանահատում թույլատրող այլ փաստաթղթեր:

Մակայն, ինչպես հայտնի է, վերը ներկայացված սահմանահատումներին մասնակցած անձանց թվաքանակի ցուցանիշները բավարար չեն ՄԷԿՏ համակարգի տվյալների բազան օգտագործելու որպես միջազգային միգրացիայի տեղեկատվության աղբյուր⁹¹: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված արտաքին միգրացիայի միջազգային մեթոդաբանության, բացակայող անձին միգրանտ որակելու համար, անհրաժեշտ է ստանալ նաև տվյալներ բացակայության տևողության և բացակայելու պատճառների վերաբերյալ, ինչն այս աղբյուրով ամրապահված չէ: Այն է ՄԱԿ-ի կողմից սահմանված արտաքին միգրացիայի միջազգային մեթոդաբանության համաձայն, հաշվետու տարում մինչև 3 ամիս տևողությամբ երկրից բացակայածները չեն դասվում միգրանտների շարքին, **3-ից մինչև 12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները**, բացառյալ՝ հանգստի, ընկերների/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները, **վերագրվում են կարճաժամկետ միգրանտներին**, իսկ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ **երկարաժամկետ միգրանտներին**:

5.3. Առողջապահություն

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ամփոփ տեղեկատվության, ՀՀ-ում 2014թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել են հետևյալ վարակային հիվանդությունները.

Հայաստանի Հանրապետությունում արձանագրված վարակային հիվանդությունների բացարձակ և հարաբերական ցուցանիշները

Հիվանդությունների անվանումը	2014թ. հունվար-դեկտեմբեր				2013թ. հունվար-դեկտեմբեր			
	ընդամենը		որից 0-14 տարեկանների մոտ		ընդամենը		որից 0-14 տարեկանների մոտ	
	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100 000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100 000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով
Պարատիֆ Ա, Բ, Գ	1	0.0	1	0.2	-	-	-	-
Սայմոնեյոզային վարակներ	404	13.4	244	42.9	300	9.9	203	35.7
Սուր աղիքային հիվանդություններ	9 452	312.6	7 176	1 260.5	8 238	272.4	6 137	1 078.0
Դիզենտերիայի մանրէակիր	5	0.2	3	0.5	10	0.3	5	0.9
Տուլարեմիա	1	0.0	1	0.2	1	0.0	1	0.2
Սիբիրյան խոց	-	-	-	-	19	0.6	1	0.2
Բրուցելյոզ առաջնակի ախտորոշված	381	12.6	37	6.5	219	7.2	25	4.4
Կապույտ հազ	85	2.8	84	14.8	30	1.0	29	5.1
Հարակապույտ հազ	16	0.5	16	2.8	22	0.7	22	3.9
Մենինգոկոկային վարակ	8	0.3	7	1.2	4	0.1	3	0.5
Փայտացում	1	0.0	1	0.2	-	-	-	-
ՉԻԱՀ	180	6.0	7	1.2	142	4.7	4	0.7
ՄԻԱՎ	350	11.6	6	1.1	236	7.8	5	0.9
Սուր թորչումած պարալիչ	23	0.8	23	4.0	22	0.7	22	3.9
Կարմրուկ	13	0.4	10	1.8	10	0.3	3	0.5
Վիրուսային հեպատիտ	201	6.6	17	3.0	213	7.0	29	5.1
Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ	465	15.4	336	59.0	381	12.6	269	47.3
Պարոտիտ համաճարակային	2	0.1	2	0.3	2	0.1	2	0.3
Մայարիա առաջնակի հայտնաբերված	1	0.0	-	-	-	-	-	-
Լեպտոսպիրոզ	4	0.1	-	-	-	-	-	-
Վերին շնչուղիների սուր վարակներ	128 202	4 239.3	91 152	16 011.2	157 999	5 224.6	105 970	18 614.0
Գրիպ	13	0.4	8	1.4	64	2.1	33	5.8
Շնչառական օրգանների տուբերկուլյոզ	894	29.6	16	2.8	909	30.1	9	1.6
Սիֆիլիս	1	-	-	-	-	-	-	-
Գոնոկոկային վարակ	15	0.5	-	-	18	0.6	-	-
Քոս	86	2.8	29	5.1	90	3.0	43	7.6
Ոջրտություն	42	1.4	40	7.0	184	6.1	180	31.6
Լեշմանիոզ	9	0.3	8	1.4	10	0.3	9	1.6

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի ամփոփ տեղեկատվության, 2014թ. հանրապետությունում ՄԻԱՎ-ի հետազոտությունների արդյունքների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև.

ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտված ՀՀ քաղաքացիների թվաքանակն ըստ նրանց սեռատարիքային խմբերի և ըստ բնակության վայրի, 2014թ.

Տարիքը	ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր		Ընդամենը	
	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
Մինչև 15	209	236	190	264	72	153	471	653
15-19	722	981	1 022	249	1 210	187	2 954	1 417

¹ Կարճաժամկետ և երկարաժամկետ միգրանտներ հասկացությունների ստանդարտ սահմանումները տես՝ “Рекомендации по статистике Международной миграции”, 1-ое пересмотренное изд., Департамент по экономическим и социальным вопросам, Демографический отдел, ООН, Нью-Йорк 1998г. (ST/ESA/STAT/SER.M/58/Rev.1), էջ 15, http://unstats.un.org/unsd/publication/SeriesM/SeriesM_58rev1R.pdf

Տարիքը	ք.Երևան		Այլ քաղաքներ		Գուղեր		Ընդամենը	
	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
20-29	15 099	4 562	12 830	1 690	12 263	2 087	40 192	8 339
30-39	10 182	4 347	5 161	1 859	4 281	1 562	19 624	7 768
40-49	3 537	2 670	1 321	1 288	1 982	1 072	6 840	5 030
50-59	2 395	1 935	1 028	997	1 820	1 312	5 243	4 244
60 և բարձր	726	1 080	551	749	672	719	1 949	2 548
Ընդամենը	32 870	15 811	22 103	7 096	22 300	7 092	77 273	29 999

5.4. Հաշվառված հաշմանդամների թվաքանակը և բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեությունը 2014 թվականին

2014թ. տարեվերջին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայում (հաշմանդամության վարչական ռեգիստրում) ընդգրկված է եղել 198.6 հազ. հաշմանդամ:

Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2014թ. տարեվերջ

մարդ

	Ընդամենը	նրանցից՝ կանայք
Մինչև 18 տարեկան	7 922	2 478
18-ից մինչև 40 տարեկան	27 131	8 576
40-ից մինչև կենսաթոշակային տարիքի	101 447	51 785
Կենսաթոշակային տարիքի և բարձր	62 119	32 063
Ընդամենը	198 619	94 902

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննական գործակալության տեղեկատվության, 2014թ. հաշմանդամ ճանաչվելու նպատակով ԲՄՓՀ-ների կողմից քննվել է 73 463 մարդ (2 946-ը՝ մինչև 18 տարեկան):

5.5. Իրավախախտումներ

Հանցագործություններ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ամփոփ տեղեկատվության, հանրապետությունում ըստ առանձին հանցատեսակների խմբերի, գրանցված հանցագործությունների դեպքերի մասին 2014թ. տվյալները ներկայացված են ստորև..

Գրանցված հանցագործությունների քանակն ըստ հանցատեսակների

միավոր

	2014թ.	2013թ.
Գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը	17 546	18 333
Մարդու (անձի) դեմ ուղղված հանցագործություններ	4 927	4 727
Հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ	2 818	3 121
Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	6 665	6 475
Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ	870	1 127
Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ	2 212	2 836
Այլ հանցագործություններ	54	47

Հարկային և մաքսային իրավախախտումներ: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. համակարգում մուտքագրվել է 493 հետաքննության նյութ՝ կապված հարկային և մաքսային օրենսդրության խախտումների հետ և 2013թ. նյութերի մնացորդի հետ կազմել 536: Այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 41-ն ուղարկվել է այլ մարմին նախաքննության, 99-ի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, 196-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, 124-ը՝ վերադարձվել է ըստ ենթակայության: Նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 76:

Բնապահպանության իրավախախտումներ: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական և տարածքային տեսչությունների կողմից ստուգվել է 160 օբյեկտ: Հայտնաբերվել է բնապահպանության օրենսդրության խախտումների 978 դեպք, որոնցից ոչ մեկը սահմանված ժամկետներում չի վերացվել:

5.6. Դատական ակտերի հարկադիր կատարումը 2014 թվականին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամփոփ տեղեկատվության, 2014թ. հանրապետությունում դատական ակտերի հիման վրա ստացվել է 480 075 կատարողական վարույթ:

Կատարողական վարույթների շարժը, 2014թ.

միավոր

Կատարողական վարույթները	Ընդամենը
Առկա էին հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	23 500
Ստացվել են հաշվետու ժամանակաշրջանում	480 075
Կարճվել և ավարտվել են հաշվետու ժամանակաշրջանում	352 614
Մնացել են հաշվետու ժամանակաշրջանի վերջում	150 961

5.7. Նոտարական գործունեությունը 2014 թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին համակարգում վավերացվել է, համապատասխանաբար՝ 127 139 և 503 891 գործ, գանձված պետական տուրքը կազմել է 139.0 և 530.4 մլն. դրամ: Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը կազմել է համապատասխանաբար՝ 1.09 և 1.05 հազ. դրամ:

5.8. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2014 թվականի IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության հիմնական ցուցանիշները, 2010-2014թթ.

միավոր

	2010	2011	2012	2013	2014
Ստանդարտացում					
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	145	121	126	244	1 195
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	355	330	137	-	-
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	11	12	9	14	15
Սերտիֆիկացում					
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	5 907	4 535	3 932	3 879	3 391
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	5	3	5	4	1
Հավատարմագրում					
ՀՀ տարածքում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների քանակը	7	9	6	-	8
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	39	17	9	1	20

2014թ. անդրակության պատճառով չի սերտիֆիկացվել Արաբական Միացյալ Էմիրություններում արտադրված 6 408 կգ հակասառիչ խտանյութ:

5.9. Արտոնագրային գործունեությունը 2014 թվականին

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության տեղեկատվության, 2014թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

Գյուտեր և օգտակար մոդելներ: 2014թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 123 գյուտի և 58 օգտակար մոդելի հայտ, որոնցից 175-ը՝ ազգային, 6-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 4 032: 2014թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2013թ. համեմատ ավելացել է 10-ով: 2014թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել են գյուտերի 3 միջազգային հայտեր: 1994-2014թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 79 գյուտի հայտ:

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2014թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1 950 հայտ (1 341-ը կամ 68.8%-ը ազգային հայտատուներից): 2013թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 14.8%-ով:

Հրապարակումներ: 2014թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար: Տեղեկագրերը հրապարակվել են հայերեն և ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 108 գյուտի, 40 օգտակար մոդելի, 27 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1 584 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների, 501 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին, ինչպես նաև տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի մասին: Ապրանքային նշանի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Ապրանքային նշանի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 24 համար:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2014թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 111 պայմանագիր, որից 75-ը՝ ապրանքային նշանների իրավունքի փոխանցման, 19-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 3-ը՝ արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու մասին, 3-ը՝ արտոնագրի զիջում, 1-ը՝ ապրանքային նշանի ֆրանչայզինգի, 3-ը՝ ապրանքային նշանի լիցենզիայի փոփոխության, 2-ը՝ ապրանքային նշանի ենթալիցենզիայի, 2-ը՝ արտոնագրի լիցենզիայի փոփոխության, 3-ը՝ ապրանքային նշանի լիցենզիայի չեղյալ հայտարարում: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ իրավաբանական անձանց միջև:

Ֆինանսական ցուցանիշներ: 2014թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 427.5 մլն. դրամ, որի 76.2%-ը (325.6 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության, 0.8%-ը (3.6 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության, 19.1%-ը (81.6 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 3.7%-ը (15.9 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 0.2%-ը (0.8 մլն. դրամ)՝ բողոքների քննարկման գծով: 2013թ. համեմատ գանձված գումարների չափը ավելացել է 105.3 մլն. դրամով:

5.10. Արխիվային գործունեությունը 2014 թվականին

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի ամփոփ տեղեկատվության, 2014թ. Հայաստանի ազգային արխիվի գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի ֆիզիկական պահպանության ապահովում, 2014թ.

	Ընդամենը
Վերականգնում, թերթ	323 932
Կազմապատում և կարում, գործ	26 510
Արկղավորում, գործ	25 000

5.11. 2014 թ. դեկտեմբեր ամսվա հիդրոոդերնութաբանական իրավիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոոդերնութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության, դեկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը ՀՀ-ում եղել է նորմայից բարձր 2-5 աստիճանով:

Միջին ջերմաստիճանն առաջին տասնօրյակում տարածաշրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր բացասական շեղումներով, բացառությամբ Արարատյան դաշտավայրի և Սյունիքի հովիտների (նորմայից բարձր 1-4 աստիճանով), երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ նորմայից բարձր 2-6 աստիճանով:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում, Սյունիքի նախալեռներում կազմել է -3 -7°C (Աշոցք գյուղում՝ -10°C, Մասրիկ գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -9°C), ՀՀ Լոռու մարզում՝ 0 -4°C, Արագածոտնի նախալեռներում և Արարատյան դաշտավայրում՝ -1 +2°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ 0 +5°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ -0.6°C):

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 1 սմ-ով և դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1 900.13 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ ցածր է 3 սմ-ով:

5.12. ՀՀ շրջակա միջավայրի 2014 թվականի դեկտեմբեր ամսվա աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, դեկտեմբեր ամսին ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի ակտիվ նմուշառմամբ մշտադիտարկման միջոցառումներ են իրականացվել 16 դիտակայաններում: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար շուրջօրյա ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 1 385 փորձանմուշ: Պասիվ նմուշառման 208 դիտակետից վերցվել է օդի 1 918 փորձանմուշ:

5.13. Արտակարգ իրավիճակները 2014 թվականին

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ամփոփ տեղեկատվության, 2014թ. հանրապետությունում գրանցվել է արտակարգ իրավիճակի 12 076 դեպք, տուժել է 9 525 մարդ (591-ը գոհվել են, 8 934-ը՝ վիրավորվել), ժամանակավորապես տարհանվել՝ 701 մարդ:

2014թ. արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել և ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 1 920 ղեկավար և մասնագետ:

5.14. Երկրաբանական ուսումնասիրությունները 2014 թ.

IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին 24 կազմակերպությունների կողմից կատարված երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալը կազմել է համապատասխանաբար՝ 441.4 և 1 128.1 մլն. դրամ:

5.15. Անշարժ գույքի շուկա

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2014թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների (առանձնատների), այգետնակների (ամառանոցների), ավտոտնակների, հասարակական նշանակության օբյեկտների, արտադրական նշանակության օբյեկտների և հողերի օտարման գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցումների քանակները ստացել են հետևյալ պատկերը.

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

միավոր

	Օտարումների քանակը, ընդամենը		այդ թվում՝					
			առուվաճառք		նվիրատվություն		փոխանակում	
	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր
ք.Երևան	5 547	21 322	4 219	15 911	1 311	5 270	17	141
Արագածոտն	582	2 148	423	1 585	154	552	5	11
Արարատ	1 174	4 261	919	3 311	249	930	6	20
Արմավիր	1 325	4 023	1 051	3 173	273	842	1	8
Գեղարքունիք	704	2 535	457	1 659	246	870	1	6
Լոռի	914	4 035	747	3 374	160	642	7	19
Կոտայք	1 724	6 249	1 355	4 817	367	1 410	2	22
Շիրակ	797	2 926	555	2 007	239	916	3	3
Սյունիք	489	1 950	373	1 409	115	540	1	1
Վայոց ձոր	241	808	200	671	41	135	-	2
Տավուշ	622	2 020	314	1 304	304	708	4	8
Ընդամենը ՀՀ	14 119	52 277	10 613	39 221	3 459	12 815	47	241

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2014թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 19 328 գործարք, 2014թ. IV եռամսյակում՝ 58 356, 2014թ. II կիսամյակում՝ 113 946 և 2014թ.-ին՝ 214 168 գործարք: